4. Բանակցութիւն սկսել քաղաքային վարչութեան հետ, որպէսզի նա հող յատկացնէ պօլիտեխնիկումի շինութեան համար, միևնոյն ժամանակ կազմել հարկաւոր նախագիծ ու նախահաշիւ։

5. Մանրամասն հրահանգ և ուղեցոյց մշակել այդ մասնաժողովի համար։ Այդ նպատակով յատուկ խորհրդակցութիւն պէտք է տեղի ունենայ յիշեալ և ուրիշ պաշտօնեաների մասնակցութեամբ և Կրիմ-Գիրէյի նախագահութեամբ»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

■ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրած է Թիֆլիսում հրատարակուող հայերէն «Արշալոյս» օրաթերթը՝ զինուորական դրութեան ամբողջ ժամանակ, մէջը յեղափոխական մի կոչ տպելու համար և պատասխանատուութեան է կոչուած նորա ժամանակ. խմբագիր Յ. Մանանդեանը։

■ Այս համարում վերջանում է Ժ. Ժ. Ռուսսօի «Էմիլ»-ի հայերէն թարգմանութեան II մասը, որ գերմ. թարգմանել է մեր աշխատակից պ. Իս. Յարութիւնեանը և տպւում էր «Լումայ»-ում որպէս յաւելուած։ Նոյնը արտատպուած և լոյս է տեսնում նաև առանձին գրքոյկով։

■ Բագւում հրատարակուող «Баку» լրագիրը անցել է ակցիօներական ընկերութեան ձեռքը, որ հրաւիրել է որպէս խմբագիրներ՝ մեր տաղանդաւոր աշխատակից պ. Մինաս Բերբերեանին, որ այժմ բնակւում է Վիեննայում և Քութայիսի նախկին նահանգապետ Ստարօսելսկուն։

■ Ապրիլի 18-ին լոյս տեսաւ «Նոր-Դարի» վերջին համարը մի նշանաւոր առաջնորդող յօդուածով մեր արդի կեանքի նեխուած երևոյթների մասին։ Այդ համարում խմբագրութիւնը յայտարարում է, որ «Նոր-Դարը» դադարեցնում է ժամանակաւորապէս՝ նիւթական պակասութեան և այլ հանգամանքների պատճառով։ Զափազանց ցաւում ենք այդ կարևոր և լուրջ թերթի դադարման համար և զարմանում ենք, թէ ինչպէս հայ ժողովրդի մեծ մասը, սրտի խորքից համակրելով «Նոր-Դարի» արտայայտած գաղափարներին, չգիտեցաւ մինչև այսօր ապահովել նորա գոյութիւնը, այն հայ ժողովուրդը, որ գիտի՛ տասնեակ հազարներ շռայլել ուրիշ՝ մօդայական հայ թերթերի համար։ Գէթ այժմ թող կատարէ նա իւր պարտքը։

▬ Մեր յայտնի գրագէտ երդուեալ հաւատարմատար պ. Գարեգին Ենգիբարեանը հրաւիրուած է ս. Էջմիածնի Սինոդի և Մայր Աթոռի իւրիսկօնսուլտ։

▬ Ազգի մէջ «խիստ մեծ ժողովրդականութիւն» վայելող «Մշակ» հայերէն լրագիրը վերջին օրերս սկսել է հրատարակուել երկու լեզուով.—պաշտօնական բաժինը՝ ռուս լեզուով, իսկ մնացեալ յօդուածները՝ հայերէն։

▬ Ս. Էջմիածնից մեզ ուղարկուած է մի հրաւէր ստորագրուած սինոդի անդամ Տ. Նահապետ եպիսկոպոսից, սինոդի պրոկուրորի ամուսին տ. Եկատերինա Լ. Ֆրէնկէլից և պ. Ց. Յովհաննիսեանից, որից իմանում ենք որ մայիսի 21-ին Էջմիածնի անտառում նշանակուած է ժողովրդական զբօսանք և վիճակախաղ՝ Երևանի նահանգի հայ ժողովրդին օգնութիւն հասցնելու և չքաւոր երեխաների ուսման վճարը հատուցանելու համար։ Նուէր կարելի է ուղարկել դրամով կամ իրերով՝ կամ պրոկուրորի տ. ամուսնուն և կամ Էջմիածնի սինոդի դիւանին։

▬ Պ. Աստուածատուր Բէկ-Յովսէփեանը՝ իւր «Մկա վախ չունիմ» գրքոյկից 10 օր. յանձնել էր խմբագրութեանս տնօրինութեան. մենք այդ օրինակներն ուղարկեցինք Երևանի նահանգի նորաբաց չքաւոր հայ դպրոցների գրադարաններին։